ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄՄԲ-ՆԲՄԾՁԲ-25Խ/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի օգոստոսի 22-ին կնքված N ԱՄՄԲ-ՆԲՄԾՁԲ-25Խ/13 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հունվարի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի և «Փրոմուոշն» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունվարի 29-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ծառայության դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2026 թվականի հունվարի 29-ին կնքված Համաձայնագիր 2-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2025 թվականի օգոստոսի 22-ին կնքված N ԱՄՄԲ-ՆԲՄԾՁԲ-25Խ/13 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ**